

«ԷՐԵԲՈՒՆԻ»: ՊԱՏՄԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՆ ՈՒ ԿԵՐՊԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ*

Ժաննա Բեգլարյան

Upnq

Պատմական հավանականության խոր զգացողությունն իր առավելագույնս դրսեորումն է ստանում <. Խաչատրյանի Երկրորդ վեպում՝ «Երեքունիում»¹, որը փաստորեն հեղինակի առաջին ավարտուն Երկն է, որբանով որ 1967 թվականին լույս տեսած «Տիգրան Մեծի» առաջին մասը Ենթարկվում է վերամշակումների և ամբողջացման: Երկը («Երեքունին») դրական արձագանքներ է ունենում ընթերցողների ու գրական հասարակայնության շրջանում: Սրան նպաստում են գրքի նկարչական ծևավորումը (նկարիչ՝ Միհրան Սոսոյան) և իր ժամանակի համար շքեղ հրատարակությունը, որը համընկնում է Երևան-Երեքունիի հիմնարկման 2750-ամյակին նվիրված տոնական միջոցառումներին: Գիրքն ինքնատիպ նվեր էր հայոց վերջին մայրաքաղաքի՝ Երևանի հոբեյյանին: Ճշմարտությունը պահանջում է նշել, որ «Երեքունին» դեռ այն Երկը չէ, որտեղ բացահայտվում են հեղինակի գրողական տաղանդի բոլոր հնարավորությունները: «Երեքունին» նյութի արտացոլման եղանակների ու կերպերի որոնման ընթացքը է:

Վեպի գործողությունները տեղի են ունենում մ.թ.ա. 8-րդ դարում, Ուրարտու-Բիայնայի Արքիշտի Առաջինի (786-764) թագավորության տարիներին՝ պատմական մի ժամանակաշրջան, որի մասին պատմանյութը թեև սակավ չէ, բայց ժամանակի քաղաքական, սոցիալ-հասարակական, մշակութային դաշտի գեղարվեստական յուրացման համար գրողը մեծապես պիտի ապավիներ իր երևակայությանը։ Եթե հաշվի առնենք, որ Հ. Խաչատրյանի բոլոր պատմավեպերը գիտական խոր ուսումնասիրությունների ու գրողական վառ երևակայության համադրումներ են, ապա «Երեբունիում» էլ գրողի ջանքերը բացահայտ են։

*Đá 1/3/Á Á Ý 1/á õ Ý 1/E ; 07.12.12£

Đá 1³/Á iā³.ñáõÃÛ³Ý ñ» ñíBË³iāñ» É 2ñäĐ Ñ³Û .ñ³í³ÝáõÃÛ³Ý » õ Éñ³.ñáõÃÛ³Ý ³ÙµÇáÝÁÉ

¹ Հ. Խաչատրյան, «Երեքունի», Երևան, 1968:

Արգիշտիի ժամանակաշրջանից պատմությանը հայտնի տարեգրությունը Վանի ժայռի վրա փորագրված «Խորխույան» կոչվող տարեգրությունն է՝ բաղկացած 400 տողից, ուր խոսվում է Առաջավոր Ասիայի մեծ նվաճողի՝ Արգիշտիի արշավանքների մասին: Փաստորեն Մենուայից հետո Արգիշտին շարունակում է հոր արտաքին և ներքին քաղաքականությունը՝ Ուրարտու-Բիայնային միացնելով նոր տարածքներ, երկիրը հզրացնելով ռազմականացես և տնտեսապես: Ուրարտական պետության հիմնական մաս են դարնում Արարատյան դաշտը, Սևանա լճի հյուսիս-արևմտյան ափը: Բնականաբար, սկսվում է նվաճված տարածքների տարբեր ցեղախմբերի միաձուլումը, այսինքն՝ հայ ժողովրդի ձևավորման ընթացքը: Մ.թ.ա. 782թ. այսօրվա Երևանի հարավ-արևելյան շրջանում՝ Արինբերդ կոչվող բլուրում կառուցում է իր հզր քաղաք-ամրոցը՝ Երեբունին: Երեբունիից հետո Արգիշտի Առաջինը Արաքսի ձախ ափին կառուցել է տալիս Երկրորդ քաղաք-ամրոցը, այն իր անունով կոչում է Արգիշտիլինիլի. հետագայում այն ստանում է Արմավիր անունը: Այս երկու քաղաք-ամրոցները դառնում են Ուրարտական պետության հյուսային մարզերի վարչական, ռազմական ու տնտեսական խոշոր կենտրոնները¹:

Հ. Խաչատրյանի վեպի հիմնանյութը Երեբունիի հիմնարկման և Բիայնայի փառքի քաղաք հրչակելու պատմությունն է: Ակադեմիկոս Ս. Արգումանյանը «Երեբունին» պայմանականորեն է պատմավեպ համարում, որքանով որ այնտեղ պատմանյութը սահմանափակվում է Արգիշտի Առաջին արքայով և ուրարտական դիցարանի Խալդ, Թեյշեբա, Շիվինի, Խվարշա աստվածներով²:

Վեպում ակնհայտորեն դրսնորված են սոցիալիստական ռեալիզմի գեղագիտության արտահայտություններ: Մի կողմ թողնելով Ուրարտական ստրկատիրական պետության նվաճողական քաղաքականության գեղարվեստական յուրացումը՝ գրողը Արգիշտի Առաջինին վեր է հանում որպես կառուցող ու խաղաղ գոյատևման գաղափարախոս-գործի: Վեպը, որ բաղկացած է տասներկու սյունից, և յուրաքանչյուր սյուն իր խորհրդանշական վերնագիրն ունի, բացվում է Արգիշտի արքայի՝ «Բիայնայի զավակներին»³ հղված պատգամով:

¹ Ըստ Հ. Ժամկոյանի «Հայ ժողովրդի պատմության», Երևան, 1963, էջ 62-64:

² Ս. Արգումանյան, «Սովետահայ վեպը», հատ. IV, 1990, էջ 477-489:

³ Հ. Խաչատրյան, «Երեբունի», էջ 9:

Գրողը վեպում նրբանկատորեն խուսափում է «ժողովուրդ» բառի օգտագործումից: Անհրաժեշտության դեպքում դիմում է «ամբոխ» բառին¹:

Իր խոսքի հանդիսավորությամբ և վսեմությամբ ի՞նչ է պատզամում Արգիշտին Բիայնայի զավակներին. «...Սովորեցեք ջրանցքներ ու պալատներ կառուցել, սովորեցեք մշակել հողը, քաղցրահամ դարձնել խաղողի ողկույզները... Հայկա բոլոր զավակները, թուները, ծորները և նրանց որդոց-որդիները պարտավոր են պաշտել շինարարության աստծուն՝ Իվարշային: ...Պրկած պահենք մեր աղեղները, քանի դեռ նետեր կան աշխարհում, բայց բրիչով կերտենք մեր փառքը: Ասորական նետերը կարող են մեր սիրտը խոցել, բայց՝ ոչ մեր տաճարները... Բիայնա Երկրի յուրաքանչյուր գերդաստան պետք է ունենա առնվազն մի շինարար»²: Ի նշանավորումն Ասորեստանի դեմ տարած հաղթանակի (Երերունի՝ նշանակում է հաղթանակ - ծանոթ. Ժ.Բ.) և ի հավաստումն արքայի պատզամի, սկսվում է նոր քաղաք-ամրոցի՝ Երերունիի կառուցումը:

Երերունիում գործողությունների խիստ ծավալումներ ու Երկարաշունչ նկարագրություններ չկան: Սյուն առ սյուն գրողն ստեղծում է զուգահեռներ, համալրում վեպի կերպարային համակարգը: Վիպման զարգացումը հիմնականում առաջ է ընթանում տրամախոսություններով, ինչը վիպմանը բատերգությանը բնորոշ խաղացկուն ոճ ու դիմամիկա է հաղորդում: Կերպարներն ամբողջանում են ոչ թե գրողական բնութագրումներով, այլ իրենց մտքի, մտածելակերպի, տրամաքանական, խոսքի միջոցով: Թեև վեպը բացվում է Արգիշտի արքայի պատզամով, գրողը նրան վեպի կենտրոնական դեմք չի դարձնում: Ընդհանրապես, դժվար է վեպի գործող անձերից որևէ մեկին կենտրոնական դեմք դիտարկելը: Կենտրոնում Երերունիի կառուցումն է, և վիպական ծավալումները պտտվում են գլխավոր նպատակի շուրջը: Գրողն ստեղծում է հանգույցներ, որոնք միևնույն ժամանակ ֆոն են՝ վերհանելու ժամանակի քաղաքական, սոցիալ-հասարակական, մշակութային դաշտը: Քարի հետ աշխատելու հանդարտ ռիթմը փոխանցվում է վիպմանը: Գրողի գրիչը ձեռք է բերում պատմական հեռավոր անցյալի կենսանցութիւնը:

¹ Նոյն տեղում, էջ 123:

² Հ. Խաչատրյան, «Երերունի», էջ 10:

գեղարվեստականացման հստակություն: Վերջնական հաշվով ընթերցողի առաջ բացվում է վաղնջական ժամանակաշրջանի ամբողջական պատկեր-կերպարը՝ հասարակական կյանքի բազմակողմ դրսևորումների փաստարկումներով:

Բիայնան ապրում է խաղաղ շինարարական կյանքով: Նրա հիմնական քաղաքական հակառակորդը Ասորեստանն է, որի թագավոր Սալմանասարը Բիայնայի ներքին խաղաղությունը պղտորելու համար նենգ ձանապարհներ է որոնում: Ստեղծվում է Սալմանասար-Շամիրամ-Արգիշտի գիծը: Արգիշտի-Սալմանասար բախումը ներքին տարողունակություն է ձեռք բերում: Դա ուժեղ և թույլ կողմերի բախում է: Թույլ կողմը, չկարողանալով բացահայտ առձակատման գնալ, դիմում է խարդախության: Ուժեղ կողմն ազնվազարմ է ու արդար: Այս գժի կրողը վեպում բիայնացին է՝ հանձինս Արգիշտիի և մյուսների: Ասորի Սալմանասարը հակառակորդի դեմ կարող է օգտագործել նույնիսկ սեփական քրոջը՝ նրան հրելով վտանգներով լեցում ձանապարի: Նա գեղեցկուիի քրոջը՝ Շամիրամին, մանկուց որպես Բիայնայի թշնամի է դաստիարակում՝ Արգիշտիին վերացնելու համար: Շամիրամը խելացի է, ձարպիկ, նպատակավալաց: Նա կարողանում է մտնել Բիայնա, խուսափել հետապնդումներից, հասնել երեքումի: Ի վերջո իր մտադրություններով բացահայտվում է և դաժանորեն պատժվում Արգիշտի արքայի կողմից: Բիայնայի ծաղկումը նոր պատերազմական ընդհարումների պատճառ է դառնում. «Մարերը և Բիայնայի բոլոր թշնամիները սկսել են տեսնել մեր հուշայուները: Նրանք նախանձում են և գազագում, որ մեր տերության մեջ այնքան շատ ենք կառուցում»¹: Վեպում պատերազմական բախման նկարագրություն չկա: Պատերազմի ընթացքի մասին ընթերցողը ծանոթանում է մարդկանց մեջ պտտվող լուրերով: Յուրաքանչյուր բիայնացի նախ շինարար է, հողագործ, արարող՝ ընդհանրապես ու անհրաժեշտության դեպքում՝ նետ ու նիզակով իր տան ու երկրի խաղաղության պաշտպանը: Սա վեպի գործող անձերից շինարար Արմենակի հաստատուն կեցվածքն է. «Ասորիները չեն կարող գրավել Բիայնան: Կռվի ժամանակ բոլոր շինարարները նետ ու նիզակ կվերցնեն: Բիայնացիք քաջ են, նրա ապագա շինարարները չեն զրկվի քաջությունից»²:

¹ Հ. Խաչատրյան, «Երեքումի», էջ 175:

² Նոյն տեղում, էջ 16:

Արմենակին գրողը վիպական գործողություններ է բերում վեպի սկզբից և գիծը շարունակում մինչև վեպի ավարտը: Արմենակը քարագործ է, վարպետ Անասիայի սիրելի ու հնուտ աշակերտը: Նա վեց տարի դպրանոց է հաճախել, նրա շինարարական հմտությունների հիմքում ընկած է գիտելիքը: Անասիայի մահից հետո նա է դառնում Երեբունիի գլխավոր շինարար-վարպետը: Նրա զորեղ ձեռքերով ու մտքի թռիչքով է կերտվում Արգիշտի արքայի հուշայունը, քարե խողովակներով Մեծ ապառաժից ջուրը հասցում Երեբունիի միջնաբերդը: Վեպում գործածված չէ «հայ» բառը: Սակայն Արմենակի ընտանիքն ակնհայտորեն վեր է հանված որպես հայկական ավանդական սրբություններով ու սովորություններով շնչող տիպիկ հայ գերդաստան: Ստեղծելով Արմենակ-Գիսակ գիծը, հյուսելով նրանց սիրո, ամուսնության, Երեբունիում տուն կառուցելու և առաջին Երեբունցի դառնալու պատմությունը՝ գրողը հավաստի գույներով վերականգնում է իր ժամանակից շուրջ երկու հազար յոթ հարյուր հիսուն տարվա հեռավորություն ունեցող հասարակական կեցության նրբերանգները՝ այժմեական գույներ հաղորդելով դրանց: Հայր-որդի-եղբայր-մայր հարաբերություններում իշխողը նվիրվածությունն ու սերն է, փոխադարձ պարտավորվածությունը: Հոգեբանական խորքով, հավաստիությամբ ու արդիական հնչողությամբ այս գիծը թերևս վեպի լուրջ նվաճումներից է: Երազուիհ-Արմենակ (մայր և որդի) հարաբերությունները սրբագործվում են մոր նվիրական զգացմունքներով: Մայրն ամեն օր պետք է սպասի որդուն, եթե չպահեց ձամփան, որդին չի վերադառնա: Այս համոզմամբ է Երազուիհն ապրում կյանքում: Նա բնավորության անհատականություն ունեցող ու կենդանի գույներով շնչող կերպար է: Որպես հայ մոր և կնոջ տիպականացված կերպար՝ այժմեական է բոլոր ժամանակների մեջ: Երազուիհը ամուսինը՝ Սլկունին և որդին՝ Մանավազը, գինվորականներ են: Երկրի ներքին խաղաղությունը ոչինչ չի ասում Երազուիհուն: Թշնամին ամեն րոպե կարող է խախտել այդ խաղաղությունը: Մոր և կնոջ տագնապող սիրտը շատ կցանկանար, որ Սլկունին ու Մանավազը ևս Արմենակի նման շինարարներ լինեին, որովհետև Երազուիհն համոզված է, որ նիզակ բռնողը նիզակով էլ սպանվում է: «...Քանի աշխարհում նետ ու նիզակ կա, տղաս, ոչ մի մայր չի կարող հանգիստ լինել», - ասում է Արմենակին¹:

¹ < Խաչատրյան, «Երեբունի», էջ 42:

Հոգսերի, սպասումների ու մորմոքների մեջ տարիների ընթացքում Երազուիու ծիգ մեջքը կորանում է, սակայն որպես ընտանիքի խմորիչ ու հենայուն, նա պարտավորված է բոլորի առաջ: Մորմոքում է, որ Մանավազը ժառանգ չունի, Արմենակին միայն աղջիկներ են ծնվում: Երազուիու ներաշխարհը փոթորկվում է, Սլկունու և Մանավազի զոհվելուց հետո աշխարհի լույսը փոխվում է գորշության: Սուսի տաճարում նրա աղոթքը ցավազին բողոք-խնդրանք է. «Ես էլ չեմ գա քեզ մոտ, Իվարշա, հովանավոր Եղիր իմ Արմենակին: Նա է մնացել միակ Սլկունի այրը: Ես գիտեմ, որ դու գորություն ունես: Ինչո՞ւ խորհրդի չես նստում Բիայնայի բոլոր աստվածների հետ, ինչո՞ւ քո բրիչը այնքան ուժ չունի, որ փոխարինի բոլոր նիզակներին: Ես աղերսում եմ քեզ, բրիչներ դիր բոլոր մարդկանց ձեռքին՝ և բիայնացիների, և Բիայնայի բոլոր թշնամիների: Թող մարդիկ միայն շենքեր կառուցեն և հող մշակեն»¹: Էրեբունիի մարդահամարին Երազուիին քար չի նետում նախատեսած փոսի մեջ: Եթե չկան ամուսինն ու որդին, չկա նաև ինքը: Նա ամուսնու ու որդու բաժին քարերը պահում է ծոցում, սրտին մոտ, եթե հնար ունենար, կպահեր սրտի մեջ ու քանի ապրում է, կօքրմացներ իր սրտի բարախյունով: Երազուիին հայ սգակիր մոր մորմոքի խորքն ու խորհուրդն իր մեջ ներառած կայացած ու ամբողջական կերպար է հեղինակի ողջ կերպարային համակարգում, թերևս ամենակայացածը «Էրեբունիի» կերպարներում:

Երազուիու ընտանիքի առաջ պարտավորվածության ժառանգողը Արմենակն է: Արմենակը ոչ միայն հմուտ քարագործ է, այլև հողի մշակ ու այգեգործ: Նա պետք է շեն պահի Կորեկավանի հայրական տունը և շարունակի կառուցել Էրեբունին: Արմենակը վեհանձն է և մարդասեր: Նա ազատ է արձակում ասորուիի Շամիրամին, թողնելով, որ Շամիրամն ինքը տնօրինի իր ընտրած ձանապարհը: Անընտանիք ու անժառանց վարպետ Ամասիան իր կյանքի վերջին օրերն անց է կացնում Արմենակի տանը՝ նրա խնամքի ու հոգածության ներքո:

Վեպում բիայնացիք վեր են հանված որպես Հայկա և Արամա սերունդ: Նրանք ազատատենչ են, արարող, հողի պաշտամունք ունեն, դժվար պահերին հենվում են հենց զենքի ուժին ու ապավինում իրենց հովանավորող աստվածներին: Գրողի գաղափարաբանական

¹ Նոյն տեղում, էջ 253:

իիմնական շեշտադրումը արարումով հավերժելու փիլիսոփայությունն է: Այս փիլիսոփայության կրողը նախ և առաջ Արգիշտի արքան է: Արգիշտին, որ վիպական դրվագներում երևում է իր պատգամներով, իրովարտակներով, քարե պնակիտների վրա ապագային հղած արձանագրություններով, մշակութային ծևավորված ժառանգության կրողը, գնահատողն ու զարգացնողն է: Որպես ռազմականապես կայացած տերության արքա՝ նա մշակութային հստակ քաղաքականություն ունի: Արգիշտին պետական խոր մտածողության տեր այր է: Ոգեկոչելով աշխատանքն ու շինարարությունը՝ չի ժխտում ռազմական հզորության ուժը: Կեպի քազմաթիվ դրվագներում հեղինակը վեր է հանում Արգիշտի արքայի մտքի խորությունն ու ժամանակի իրադարձությունների գնահատման սրափությունը: Նա գործում է ոչ միայն ի նպաստ ներկայի: Նա գալիքի մունետիկն է: Համոզված է. «...Բիայնայի աստվածներն ինձ հավաստում են, որ հազար տարի հետո Բիայնայի և աշխարհի բոլոր կողմերից մարդիկ կգան Երեբունի՝ տեսնելու և սովորելու համար: Աստվածներն ինձ հավաստում են, որ հազար տարի հետո Երեբունին կլինի շինարարների ամենամեծ քաղաքն աշխարհում¹»:

Գրողը հայկականացնում է պատմական միջավայրը: Բիայնայում արքայական իրովարտակներով ստեղծվում է հողի, ծարի, ծաղկի, բերքի պաշտամունք: Շինարարի կողքին նոյն հավատքով շնչավորվում է հողագործը, փառաբանվում նրա աշխատանքն ու աշխատանքի արդյունքը, կազմակերպվում են փառատոններ ոչ միայն աստվածներին՝ Իվարշային և Վանատուրին նվիրված, արքայի հրամանով նռան տոն ու տոնավաճառ է կազմակերպվում Երեբունիում: Բիայնացիք աստվածություններին նուռ ու խաղող են ընծայաբերում, կազմակերպում գինարբութի տոններ: Գրողը Բիայնայի դիցարանին խառնում է հայոց դիցարանի ներկայացուցիչներին, Բիայնայի կենցաղավարությունը շնչավորում հայկական սովորություններով: «Եթե չալարես, ջուրը ք ետևից սար կբարձրանա»² զիսում արքունի գուսանը վիպում է աշխատանքի ու աշխատասիրության ասքը. Բենի տասներկու որդիներից Հայկին բաժին է ընկնում Քարաստան երկիրը: Լեռների ոգին հուշում է Հայկին, որ եթե ինքը չալարի, օրնիբուն աշխատի, ջուրն իր

¹ < Խաչատրյան, «Երեբունի», էջ 264:

² < Խաչատրյան, «Երեբունի», էջ 59:

հետևից կշարժվի, ու Քարաստանը կփոխվի ծաղկաստան-դրախտի: Այդպես էլ լինում է: Հայկի ավանդները շարունակում է նահապետ Արանք: Եվ իրաման է արձակում Արամը. «Թող բոլորն անիծեն նրան, ով Քարաստան երկրի երկնքի տակ ծովություն կանի: Բոլորը պարտավոր են աշխատել օրնիբուն»¹: Քարաստանի կանայք բողոքում են, որ սիրո համար ժամանակ չի մնում: Քարաստանում սիրո ժամանակ է ընտրվում գիշերը. «Հնայիշ է դառնում ցերեկվա հոգնությունից հետո գիշերվա սերը... Գիշերային սիրո ժամերն ուժ էին տալիս մարդկանց ցերեկվա հոգնատանց աշխատանքը թերև տանելու համար»²: Գրողն ստեղծում է մարդու և աշխատանքի դաշնության փիլիսոփայությունը:

Բիայնայում ամեն մեկը գիտակցում է իր գործի կարևորությունը և այդ գործի նվիրյալն է: Քաղաքապետ Արծրունի, Վարպետ Անասիա, հիսնապետ Սլկունի, քարագործ Արմենակ, Երկաթագործ Կորյուն, արքունի խորհրդական Շատունի և ուրիշներ կերպարային խորը ու բնավորություն են ստանում իրենց գործունեության մեջ: Իսկ նա, ով կեղծարարության է գնում իր կոչման մեջ, պատժվում է աստվածների կողմից, դատապարտվում կործանման: Քրմապետ Կրտսեր Բզնունին ցնորվում է և դատապարտվում մահվան: Թեև վիպական այս գիծը հավաստիություն չի ներշնչում, բայց ակնհայտորեն ընդգծում է գրողի միտումը:

Վեպում բոլոր կերպարները չեն, որ տիպաբանորեն կայացած են ու ամբողջական: Պատմական ժամանակաշրջանին առանձնահատուկ սոցիալական հակադրության գեղարվեստական յուրացման նպատակով ստեղծված են ստրուկներ Վազիկի և Մրջունի կերպարները: Էրեբունիից փախուստի դիմած հիսուն ստրուկների միջադեպը և նրանց առաջնորդ Քարասիրտի կերպարը գուրկ են հավանականությունից ու իմաստային խորքից: Կերպարակերտման մեջ գրողը երբեմն գնում է չափազանցումների: Կերպարի արդիականացման միտումն է, որ դրդում է վաղնջական շրջանում ապրող ներկատան կառավարչի աղջկան՝ Սիրվարդին, վեր հանել որպես բարի, ցավակից, ստրուկի և ազատի միջև տարբերություն չդնող, խորունկ մտքի տեր, համարձակ աղջկա: Քաղաքապետ Արծրունի-Սիրվարդ գուգահեռում աղջիկն այնքան խելացի, տրամաբանական ու համարձակ պատասխաններ է տալիս, որ վերջինս

¹ Նոյն տեղում, էջ 65:

² Նոյն տեղում, էջ 65:

ասում է. «Մնաս հաջողությամբ, կառավարչի աղջիկ, դու տղամարդու չափ խելք ունես»¹: Նոյն անհավանական վիճակների մեջ ենք տեսնում Սալմանասարի դեսպան Նոսորին: Արքայազն Ռուսայի հետ դրվագում անհավանականությունը փոխվում է զավեշտի: Գրողական համակրանքի և հակակրանքի ակնհայտ դրսևորումները հատուկ են Հ. Խաչատրյան-գեղագետին: Տուշպայում հայտնված դեսպան Նոսորը ոչ միայն զարմացած, այլև հիացած է Բիայնայի նվաճումներով: Իսկ Տուշպայի ծովակի գեղեցկությամբ ուղղակի զմայլվում է՝ մտածելով. «Այս ծովակն արժե երեք անգամ երեք Ասորեստան»²: Արգիշտի արքան ամիսներով ձգձգում է Նոսորի ընդունելությունը: Ի վերջո արքայի հետ Տուշպայից դուրս հանդիպելու իրավունք է ձեռք բերում արքայազն Ռուսայից՝ թույլ տալով, որ Վերջինս որպես ծի հեծնի իրեն: Վեպում բազում են բնավորության անհատականություն ձեռք չբերած կերպարները՝ շինական Հրայր, Լուսնթագ, Երեք Շամիրամներ, նահապետ Նասիմի, ստրուկների առաջնորդ Քարասիրտ, Մանավագ, Վանուիի և ուրիշներ:

«Երերունի» վեպով սկսվում է Հ. Խաչատրյանի գուսանապատումը և շարունակվում մյուս պատմավեպերում: «Ինչո՞ւ Երերունիում գարունը կարծ է, աշունը՝ Երկար» գլխում³ գրողը կերպավորում է գուսաններ Վինիին, Կումին, Ճորոխին, որոնք իրենց բնաշխարհի հմայքը, գեղեցկությունն ու յուրօրինակությունն են վեր հանում հանպատրաստից ասք-վիպումներով՝ արժանանալով արքայի հավանությանն ու նվերներին:

«Երերունին»՝ իր տասներկու սյուներով շինարար կյանքի ու խաղաղ գոյության գաղափարաբանության հիմն է, կենսունակ կամուրջ՝ ծգված մ.թ.ա. 8-րդ դարի ու ապագայի միջև: Այն արդիական հնչողություն կունենա նաև զալիք ժամանակներում:

¹ Հ. Խաչատրյան, «Երերունի», էջ 198:

² Նոյն տեղում, էջ 94:

³ Նոյն տեղում, էջ 221:

«Эребуни». Историческая эпоха и система образов
Жанна Бегларян
Резюме

В статье рассматривается место романа Айка Хачатряна «Эребуни» в ряду его исторических романов. «Эребуни» - первое завершенное произведение автора, вышедшее в свет в 1968 году. В основе романа лежит история основания Эребуни-Еревана и провозглашения Биайны городом славы. Действие романа развертывается в 8 веке до н. э. Основной идеологический акцент делается на прославлении мирного строительного труда, совершающегося по твердому убеждению большинства действующих лиц в романе. Составившимся образами романа являются царь Аргишти, мастер Амасия, каменщик Арменак, Еразуи, мэр Арцруни, и другие. Роман является живым мостом между 8 веком до н.э. и будущим, овеянным оттенками современности.

Historical Epoch of “Erebuni” and a System of Characters
Zhanna Beglaryan
Summary

The article reveals a position of Hayk Khachatryan's novel “Erebuni” in the rank of his historical novels. “Erebuni” was the first complete work of the author published in 1968. Basis of the novel lies in the history of Erebuni – Yerevan foundation and Biayna's proclamation as a glory city. The novel's action is developed in the 8th century B.C. The basic ideological accent is done on the glorification of the peaceful building work, which is the firm belief of the majority of characters in the novel. The main characters of the novel are the king Argishti, master Amasiya, mason Armenak, Yerazuhi, mayor Artsruni and others. The novel is a living bridge between the 8th century B.C. and the future fanned by modern times shades.